Հավելված՝
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի 25.09.2019թ.
թիվ 383-Լ որոշման

Սրա Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՅՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** կայքում փաստաբանական գրասենյակների վերաբերյալ տեղեկություններ ներառելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգով սահմանված իրավական կարգավորումները վերաբերում են բացառապես Պալատի կայքում փաստաբանական գրասենյակների մասին տեղեկությունների ներառմանը:

II. Փաստաբանական գրասենյակի հասկացությունը

3. Սույն կարգի կիրառման տեսանկյունից փաստաբանական գրասենյակ է համարվում՝

1) առնվազն երեք աշխատող ունեցող և փաստաբանական ծառայություններ մատուցող այն առևտրային կազմակերպությունը, որի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալի 100 տոկոս բաժնեմասերը (բաժնետոմսերը, փայերը) պատկանում է (են) փաստաբանին (փաստաբաններին).
2) առնվազն երեք աշխատող ունեցող անհատ ձեռնարկատեր փաստաբանը:

III. Պալատի կայքում փաստաբանական գրասենյակի մասին տեղեկությունների ներառման կարգը

4. Պալատի կայքում փաստաբանական գրասենյակի մասին տեղեկություններ ներառելու համար փաստաբանական գրասենյակի գործադիր մարմնի ղեկավարը

կամ անհատ ձեռնարկատեր փաստաբանը ներկայացնում է գրավոր (այդ թվում նաև էլեկտրոնային փոստի միջոցով) դիմում, որը պետք է ներառի՝

1) փաստաբանական գրասենյակի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով.
2) փաստաբանական գրասենյակի հասցեն, հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն և կայքի հասցեն (առկայության դեպքում).
3) մասնագիտացումը (հատկապես ի՞նչ ոլորտի գործերով է զբաղվում գրասենյակը).
4) փաստաբանական գրասենյակի յուրաքանչյուր փաստաբան մասնակցի մասին տեղեկություն՝ մասնակցության տոկոսը, անունը, ազգանունը և արտոնագրի համարը.
5) առկայության դեպքում՝ կազմակերպության ապրանքային նշանի (լոգոյի) ֆայլը (վեկտորային տարբերակով).
6) աշխատակիցների թիվը.
7) փաստաբանական գրասենյակի գործունեության հակիրճ նկարագրական տեքստը:

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված դիմումին կցվում են՝

1) կազմակերպության դեպքում՝ կազմակերպության կանոնադրության, մասնակցի (մասնակիցների) փաստաբանական գործունեության արտոնագրի (արտոնագրերի) պատճենը (պատճենները), ինչպես նաև տեղեկանք աշխատողների թվաքանակի և պաշտոնների մասին.
2) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության համապատասխան փաստաթղթի պատճենը, փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը, ինչպես նաև տեղեկանք աշխատողների թվաքանակի և պաշտոնների մասին:

IV. Եզրափակիչ դրույթներ

6. Սույն կարգով սահմանված դիմումը ներկայացվելուց հետո Պալատի համապատասխան աշխատակիցը քսան օրյա ժամկետում ներառում է համապատասխան տեղեկությունները կայքի «Գրասենյակներ» բաժնում:

7. Սույն կարգը չի տարածվում կարգի ընդունման պահին կայքում առկա գրասենյակների էջերի նկատմամբ:

8. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հոկտեմբերի 1-ից: